# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N860-Ա** **26 դեկտեմբերի 2024թ,**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ «ԲՏՃՄ ՈԼՈՐՏԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ) ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ» ԾՐԱԳՐՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և <<Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշման N 9.1 հավելվածը, ուսուցիչների հավելավճարները վճարելու նպատակով՝

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմին «ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկայի) դասավանդող ուսուցիչների հավելավճարի հատկացման մասին» միջոցառման շրջանակներում տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 157 743 100 (հարյուր հիսունյոթ միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 157 743 100 (հարյուր հիսունյոթ միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը վերաբաշխել Հայաստանի Հանրապետության

Գեղարքունիքի մարզային ենթակայության թվով 116 (հարյուր տասնվեց) հանրակրթական դպրոցներին՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար ( գլխավոր ֆինանսիստ ) Սիմոն Մանուկյանին՝ կնքել գումարի հատկացման պայմանագրեր:

26.12.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ՄԱՐԶՊԵՏ՝
ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ